Վահե
ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ
Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

1994 թ. ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ): 1994-1997 թթ. սովորել է ԵՐԺՏԻ ասպիրանտուրայում՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ:

1998 թ. առ այսօր զբաղվում է գիտամանկավարժական գործունեությամբ տնտեսագիտության տեսության ամբիոնում. սկզբում՝ որպես ասիստենտ, այնուհետև՝ որպես դոցենտ: 2018 թ. մինչ օրս ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է:

Հեղինակ է շուրջ 50 գիտական աշխատանքների:

https://orcid.org/0000-0002-0609-2837

ՀՀ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ 2022. ՄՏԱՀՈԳԻՉ ԹՎԵՐ

DOI: 10.52174/2579-2989_2024.1-22

Հիմնաբառեր. *մարդահամար, մշտական բնակչություն, առկա բնակչություն, սեռատարիքային կազմ, բնակչության ծերացում, ծնելիության գործակից*

Հոդվածում ուսումնասիրվել են 2022 թ.-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացված մարդահամարի որոշ հիմնական ցուցանիշներ: Մատնանշվել է, որ հատկապես մտահոգիչ են ՀՀ մշտական և առկա բնակչության անկման տեմպերը: 2001-2022 թթ. ժամանակահատվածում բացասական փոփոխություններ են տեղի ունեցել նաև առկա բնակչության սեռատարիքային կազմում: Մասնավորապես՝ մինչև 30 տարեկան բնակչությունը 2022 թ.-ին՝ 2001 թ.-ի համեմատությամբ նվազել է մոտ 1/3–ով (34%): 30-ից մինչև 54 տարիքային խմբի բնակչությունը միջինում նվազել է մոտ 10%-ով: Հակառակ պատկերն է 60-ից բարձր տարիքային խմբում: Նշված ժամանակահատվածում 60 տարեկանն անց ազգաբնակչության քանակն աճել է մոտ երկու անգամ (191%) և կազմել առկա բնակչության մոտ 25.1%-ը:

Ըստ 2022 թ. մարդահամարի արդյունքների՝ 20-ից մինչև 34 տարիքային խմբում ընդգրկված կանանց գրեթե 45%-ը երբևէ չի ունեցել երեխա, ինչը վկայում է կանանց միջին վերարտադրողական տարիքի աստիճանական աճի մասին:

2022 թվականի հոկտեմբերի 13-22-ը Հայաստանի Հանրապետությունում համակցված մեթոդով (ըստ բնակչության պետական ռեգիստրի՝ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով (ՍԷԿՏ) և 25 տոկոս ընտրված հասցեներում բնակվող տնային տնտեսություններից մարդահամարի ծրագրով հավաքված բոլոր տվյալների ամբողջական համակցում) անցկացվեց հերթական, օրենքով պլանավորված մարդահամարը: Ինչպես և սպաս-



	1979	2001	2011	2022
Առկա բնակչություն	3,030,747	3,002,594	2,871,771	2,689,438
Մշտական բնակչություն	3,037,259	3,213,011	3,018,854	2,932,731

Առկա բնակչություն Մշտական բնակչություն

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ առկա և մշտական բնակչության թվաքանակն ըստ 2022 թ. մարդահամարի տվյալների[1]

վում էր, մարդահամարի արդյունքները լավատեսական չէին: Ամփոփ արդյունքների համաձայն՝ Հայաստանի մշտական բնակչությունը[2] կազմել է 2 932 731, իսկ առկա բնակչության թվաքանակը[3]՝ 2 689 438 մարդ:

Առկա և մշտական բնակչության թվաքանակները համադրելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ՀՀ 2001 և 2011 թթ. մարդահամարների տվյալներում առկա և մշտական բնակչության թվաքանակների հաշվարկման մեթոդաբանությունը տարբերվում է նախորդներից, քանի որ ժամանակավոր ներկա և բացակա կարգավիճակ ունեցող բնակչության գտնվելու և բացակայելու տևողությունը, ի տարբերություն ԽՍՀՄ-ում ընդունված մինչև 6 ամիս ժամկետի, կազմել է մինչև մեկ տարի[4]:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2022 թ.-ին՝ 2011 թ.-ի համեմատությամբ առկա բնակչության թվաքանակը նվազել է 182 հազարով կամ 6 տոկոսային կետով: Մշտական բնակչությունը նվազել է 86 հազարով կամ 3 տոկոսային կետով: Ինչ վերաբերում է մշտական բնակչության մեջ քաղաքային և գյուղական բնակչության ցուցանիշներին, ապա պատկերը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակից պարզ է դառնում, որ վերջին քսան տարվա կտրվածքով մշտական բնակչության մեջ քաղաքային բնակչության ամենամեծ նվազումը գրանցվել է Լոռու (26.8%), Սյունիքի (26.0 %), Արագածոտնի (22.7%) և Շիրակի (22.4%) մարզերում: Համեմատության մեջ կայուն է մնացել Երևանի և Կոտայքի մարզի քաղաքաբնակների քանակը՝ համապատասխանաբար -1.5% և -5.0%:

Ինչ վերաբերում է գյուղական բնակչությանը, ապա ամենամեծ անկումը գրանցվել է ՀՀ սահմանամերձ մարզերից

[1] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ 2022 թվականի մարդահամարի ամփոփ արդյունքները, https://armstat.am/file/doc/99542783.pdf: 1989 թ. մարդահամարը ՀԽՍՀ-ում անցկացվել է բացառիկ բարդ իրավիճակում, որը բացասաբար է անդրադարձել ոչ միայն մարդահամարի նախապատրաստման ու անցկացման, այլև դրա արդյունքների վրա՝ հանգեցնելով հանրապետության բնակչության թվաքանակի թերհաշվառմանը, ինչով պայմանավորված, 1989 թ. մարդահամարի արդյունքում ստացված բնակչության թվաքանակի ցուցանիշները չեն կիրառվել որպես բնակչության ընթացիկ հաշվառման հիմք, այլ հանրապետության բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառումը շարունակվել է վարվել 1979 թ. մարդահամարի հիմքով իրականացվող ընթացիկ հաշվառման տվյալներով:

[2] Մշտական բնակչության թվաքանակում ներառված է՝ ՀՀ-ում մշտապես (սովորաբար) բնակվող ու հաշվառման պահին ներկա և ժամանակավոր բացակա բնակչության թվաքանակի ցուցանիշների հանրագումարը: Ժամանակավոր բացակաների թվաքանակում ներառված են մարդահամարի պահին ՀՀ-ից մինչև մեկ տարի ժամկետով բացակա անձինք: Աղբյուրը՝ ՀՀ Վիճակագրական Կոմիտե. 2022 թվականին Հայաստանի Հանրապետությունում անցկացված մարդահամարի նախնական արդյունքները. https://armstat.am/file/article/sv_07_23a_510.pdf

[3] Առկա բնակչության թվաքանակում ներառված է ՀՀ-ում մշտապես (սովորաբար) բնակվող ու հաշվառման պահին ներկա և ժամանակավոր ներկա բնակչության թվաքանակի ցուցանիշների հանրագումարը: Ժամանակավոր ներկաների թվաքանակում ներառված են մարդահամարի պահին ՀՀ-ում ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով գտնվող և մշտապես չբնակվող անձինք: Աղբյուրը՝ նույն տեղում:

[4] Տես «2010 թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականները»՝ մշակված Եվրոստատի հետ, https://unece.org/DAM/stats/publications/CES_2010_Census_Recommendations_English.pdf, էջ 37:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Քաղաքային բնակչություն (հազ. մարդ)[5]

	2001	2011	2022
ք. Երևան	1103.5	1060.1	1086.7
Արագածոտն	32.9	30.6	25.4
Արարատ	79.9	74.1	66.8
Արմավիր	98.3	85.1	80.8
Գեղարքունիք	79.0	71.4	65.7
Լոռի	170.0	137.8	124.3
Կոտայք	154.0	137.5	146.3
Շիրակ	174.3	147.0	135.3
Սյունիք	104.1	95.2	77.0
Վայոց ձոր	19.6	18.5	16.2
Տավուշ	50.7	54.2	47.5

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Գյուղական բնակչություն (հազ. մարդ)[6]

	2001	2011	2022
ք. Երևան	-----	-----	-----
Արագածոտն	105.4	102.3	103.5
Արարատ	192.1	186.3	182.2
Արմավիր	177.9	180.7	172.7
Գեղարքունիք	158.7	163.7	144.0
Լոռի	116.5	97.8	98.5
Կոտայք	118.5	116.9	123.6
Շիրակ	109.1	105.0	100.2
Սյունիք	48.5	46.6	37.5
Վայոց ձոր	36.4	33.9	31.2
Տավուշ	83.7	74.4	67.4

Սյունիքում՝ 22.8%, Տավուշում՝ 19.4%, Վայոց Ձորում՝ 14.4% և Լոռիում՝ 15.4%: Աճ է գրանցվել միայն Կոտայքի մարզում՝ 4.3%:

2001-2022 թթ. ժամանակահատվածում բացասական փոփոխություններ են տեղի ունեցել նաև առկա բնակչության սեռատարիքային կազմում: Մասնավորապես՝ մինչև 30 տարեկան բնակչությունը 2022 թ.-ին՝ 2001 թ.-ի համեմատությամբ նվազել է մոտ 1/3–ով (34%), ընդ որում, տղամարդկանց քանակը պակասել է 32.1%-ով, իսկ կանանցը՝ 34.7%-ով (գծապատկեր 2): Սա ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ վերջին տարիներին նշված տարիքային խմբի տղամարդկանց քանակի մի զգալի մասը համալրվել է այլազգիներով (հնդիկներ, ռուսներ)՝ հաշվի առնելով 2020 թ.-ի մեր կորուստները, ինչպես նաև նշված ժամանակահատվածում մեծ ծավալների հասնող արտագաղթը (հիմնականում նըշ-

[5] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ 2001 թվականի մարդահամարի արդյունքները, https://armstat.am/am/?nid=748 , ՀՀ 2011 թվականի մարդահամարի արդյունքները, https://armstat.am/am/?module=publications&mid=6&id=1512, ՀՀ 2022 թվականի մարդահամարի հիմնական արդյունքները, https://www.armstat.am/am/?nid=82&id=2623

[6] Նույն աղբյուրը:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՀՀ-ում իրականացված 2001 և 2022 թթ. մարդահամարների արդյունքներն ըստ սեռատարիքային կազմի (առկա բնակչություն)[7]

ված տարիքային խմբի տղամարդիկ): Այս ամենը, մեր կարծիքով, կարող է հանգեցնել գենոֆոնդի վերարտադրության լուրջ խնդիրների: 30-ից մինչև 54 տարիքային խմբում բնակչությունը միջինում նվազել է մոտ 10%-ով (գծապատկեր 2):

Հակառակ պատկերն է 60-ից բարձր տարիքային խմբում: Մասնավորապես՝ երբ համեմատում ենք 2022 թ.-ը 2001 թ.-ի հետ, ապա նկատելի է դառնում, որ նշված ժամանակահատվածում 60 տարեկանն անց ազգաբնակչության քանակն աճել է գրեթե երկու անգամ (191%) և կազմել առկա բնակչության մոտ 25.1%-ը[8]: Համաձայն ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի՝ եթե երկրի բնակչության կառուցվածքում 65 և բարձր տարիքի բնակչությունը 7%-ից ավելի է, ապա դա խոսում է տվյալ բնակչության ծերացման մասին: 2022 թ.-ին մեր հանրապետությունում այդ ցուցանիշը եղել է 17.1%[9]: Համաձայն ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) կանխատեսումների՝ Հայաստանում բնակչության ծերացման դեմ ուղղված համապատասխան միջոցառումների ոչ լիարժեք իրականացման կամ բացակայության դեպքում 2050 թ.-ին այդ ցուցանիշը կազմի 22-23%[10]: Խոսքը տվյալ դեպքում ՀՀ մշտական բնակչության մասին է: Իսկ ինչ վերաբերում է առկա բնակչությանը, ապա այդ ցուցանիշը կհասնի մոտ 30%-ի[11]:

Պտղաբերության ընդհանուր մակարդակի կայուն նվազման, ինչպես նաև ծնելիության և մահացության ընդհանուր գործակիցների երկարաժամկետ հատման դեպքում առաջիկայում երկիրը կարող է հայտնվել ժողովրդագրական հետանցումային երկրների շարքում: Հետանցումային վերջին փուլում գտնվող երկրներում տեղի է ունենում ծնելիության և մահացության մակարդակի հատում, ինչն էլ բացասական է դարձնում բնակչության բնական աճի տեմպը[12]: Երկարաժամկետ հեռանկարում

[7] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ 2001 թվականի մարդահամարի արդյունքները, https://armstat.am/am/?nid=748 , ՀՀ 2011 թվականի մարդահամարի արդյունքները, https://armstat.am/am/?module=publications&mid=6&id=1512, ՀՀ 2022 թվականի մարդահամարի հիմնական արդյունքները, https://www.armstat.am/am/?nid=82&id=2623

[8] Տե՛ս նույն տեղում:

[9] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության 2022 թվականի մարդահամարի հիմնական արդյունքները, https://www.armstat.am/am/?nid=82&id=2623

[10] Տես United Nations Department of Economic and Social Affairs, Population Division (2020). World Population Ageing 2020 Highlights: Living arrangements of older persons (ST/ESA/SER.A/451):

[11] Կանխատեսումը կատարվել է՝ հաշվի առնելով 2022 թ.-ին նշված տարիքային խմբի բնակչության տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ:

[12] Տես Wang H. Global age-sex-specific fertility, mortality, healthy life expectancy (HALE), and population estimates in 204 countries and territories, 1950–2019: a comprehensive demographic analysis for the Global Burden of Disease Study 2019. Lancet 2020:

ԱՂՅՈՒՍԱԿ 3

20-ից 34 տարիքային խմբում գտնվող կանանց ծնելիության ցուցանիշները[13]

	2001			2011			2022		
Տարիքը	Ընդամենը՝ կանայք	Երբևէ երեխա չծնած կանայք	%	Ընդամենը՝ կանայք	Երբևէ երեխա չծնած կանայք	%	Ընդամենը՝ կանայք	Երբևէ երեխա չծնած կանայք	%
20-24	135464	81572	60.2	148337	102148	68.9	77931	60807	78.0
25-29	115042	31537	27.4	139820	51361	36.7	91019	38584	42.4
30-34	107453	16042	14.9	114891	26380	23.0	114891	27460	23.9
Ընդամենը	357959	129151	36.1	403048	179889	44.6	283841	126851	44.7

բնակչության սեռատարիքային կառուցվածքի փոփոխությունների հետևանքով երկիրը կարող է մտնել ցածր պտղաբերության փոխարինման կայուն փուլ և բախվել շրջված սեռատարիքային կառուցվածքին՝ բարձր տարիքային խմբի մեծ մասնաբաժնով[14]:

Բնակչության ծերացման մասին է վկայում նաև այն փաստը, որ կանանց վերարտադրողական լավագույն տարիք հանդիսացող 20-ից մինչև 34 տարիքային խմբում 2001-2022 թթ.-ին ծնելիության ցուցանիշը նշանակալիորեն նվազել է (աղյուսակ 3):

Մասնավորապես, ըստ 2022 թ. մարդահամարի արդյունքների, այդ տարիքային խմբում ընդգրկված կանանց գրեթե 45%-ը երբևիցե երեխա չի ունեցել, ինչը վկայում է այն մասին, որ միջին վերարտադրողական տարիքն աստիճանաբար աճում է: Այսպիսի մտահոգիչ վիճակագրության հիմնական պատճառներից մեկն այն է, որ մարդիկ վստահություն չունեն վաղվա օրվա հանդեպ: Ավելի վատ է պատկերը, երբ դիտարկում ենք նույն ցուցանիշը քաղաքային բնակչության շրջանում՝ 54.3%[15]:

Ըստ վիճակագրական տվյալների՝ ծնելիության գումարային գործակիցը 2022 թ.-ին կազմել է 1.7[16], ինչը բավական ցածր է անգամ պարզ վերարտադրության համար անհրաժեշտ՝ 2.15 մակարդակից (2001 թ.-ին՝ 2.1, 2011 թ.-ին՝ 1.8)[17]: Այսինքն, ծնելիության գումարային գործակցի այսպիսի ցուցանիշով մենք կարող ենք «մրցակցել» այնպիսի զարգացած երկրների հետ, ինչպիսիք են Ֆրանսիան (1.8), Գերմանիան (1.7), Դանիան (1.7), Բելգիան (1.6), Իռլանդիան (1.8), Շվեդիան (1.7)[18]:

ՀՀ-ում 1990 թ.-ից ի վեր ծնելիության ընդհանուր գործակիցը, որը բնութագրում է հաշվետու ժամանակաշրջանում կենդանածինների թվաքանակը 1000 կնոջ հաշվով, շարունակաբար նվազել է (1990 թ.-ին՝ 22.5%, 2000 թ.-ին՝ 9.01%, 2010 թ.-ին՝ 13.8%, 2021 թ.-ին՝ 12.4%)՝ կրճատվելով 1.8 անգամ[19]: Այնինչ 2022 թ.-ին այդ ցուցանիշի համաշխարհային միջին մակարդակը 16.8 էր[20]:

Այս իրավիճակը շտկելու և բնակչու-

[13] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ 2001 թվականի մարդահամարի արդյունքները, https://armstat.am/am/?nid=748, ՀՀ 2011 թվականի մարդահամարի արդյունքները, https://armstat.am/am/?module=publications&mid=6&id=1512, ՀՀ 2022 թվականի մարդահամարի հիմնական արդյունքները, https://www.armstat.am/am/?nid=82&id=2623

[14] Տես Բուլանիկյան Վ.Ս., Հաջյան Կ.Ա., ՀՀ ժողովրդագրական հիմնական ցուցանիշների շարժընթացը և Կայուն զարգացման նպատակների համատեքստում կանխատեսվող միտումները, ՇՊՀ գիտական տեղեկագիր, 2021, №2, պրակ Ա, Գյումրի, 2021:

[15] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության 2022 թվականի մարդահամարի հիմնական արդյունքները, https://www.armstat.am/am/?nid=82&id=2623

[16] Տե՛ս նույն տեղում:

[17] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ 2001 թվականի մարդահամարի արդյունքները, https://armstat.am/am/?nid=748

[18] Աղբյուրը՝ UNECE. Суммарный коэффициент рождаемости, https://w3.unece.org/PXWeb/ru/Table?IndicatorCode=26

[19] Աղբյուրը՝ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2022, ՀՀ ՎԿ, Երևան, 2022:

[20] Աղբյուրը՝ Мировой атлас данных, весь мир, демография, https://ru.knoema.com/atlas/%d0%92%d0%b5%d1%81%d1%8c-%d0%bc%d0%b8%d1%80/%d0%9a%d0%be%d1%8d%d1%84%d1%84%d0%b8%d1%86%d0%b8%d0%b5%d0%bd%d1%82-%d1%80%d0%be%d0%b6%d0%b4%d0%b0%d0%b5%d0%bc%d0%be%d1%81%d1%82%d0%b8

թյան վերարտադրությունն ապահովելու համար անհրաժեշտ է երիտասարդ ընտանիքներին վերակողմնորոշել դեպի երեխաներ ունենալը, օգնել նրանց լուծել բնակարանային խնդիրները և ավելացնել յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար վճարներն ու սոցիալական արտոնությունները: Արծարծվող հիմնախնդրի լուծման տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ որոշ թիրախային միջոցառումներ կիրառելի են նաև մեզանում: Նախ՝ անհրաժեշտ է նպաստել կանանց զբաղվածության վերականգնմանը՝ հեշտացնելով կես դրույքով և հեռավար աշխատանքի հասանելիությունը, ինչը թույլ կտա մայրերին ավելի շատ ժամանակ անցկացնել տանը՝ իրենց երեխաների հետ: Երկրորդ՝ պետք է երաշխավորել ծնողական արձակուրդի 180 օրվա ծածկույթը՝ աշխատավարձի մինչև 80 տոկոսի չափով: Եվ երրորդ՝ անհրաժեշտ է առնվազն չորս երեխա ծնած և մեծացնող կանանց ցմահ ազատել եկամտային հարկից:

Առաջադրված նպատակներին հասնելու համար առաջնային պետք է համարվի ոչ նյութական բնույթի միջոցառումների իրականացումը, այն է՝ բարոյահրավական նորմերի մշակում, հանրահռչակում ու սերմանում հասարակության մեջ, ընտանիքի մասին հասարակական ճիշտ կարծիքի ձևավորում՝ հայկականության ավանդական հիմքերին համապատասխան: Միաժամանակ, ժողովրդագրական քաղաքականության մեջ ավելի հստակ ուղղվածություն պետք է տրվի մի շարք տնտեսական մեթոդների:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բուլանիկյան Վ.Ս., Հաջյան Կ.Ա., ՀՀ ժողովրդագրական հիմնական ցուցանիշների շարժընթացը և Կայուն զարգացման նպատակների համատեքստում կանխատեսվող միտումները, ՇՊՀ գիտական տեղեկագիր, 2021, № 2, պրակ Ա, Գյումրի, 2021:
2. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ 2022 թվականի մարդահամարի ամփոփ արդյունքները, https://armstat.am/file/doc/99542783.pdf
3. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ 2001 թվականի մարդահամարի արդյունքները, https://armstat.am/am/?nid=748
4. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ 2011 թվականի մարդահամարի արդյունքները, https://armstat.am/am/?module=publications&mid=6&id=1512
5. «2010 թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականները»՝ մշակված Եվրոստատի հետ, https://unece.org/DAM/stats/publications/CES_2010_Census_Recommendations_English.pdf
6. Wang H. Global age-sex-specific fertility, mortality, healthy life expectancy (HALE), and population estimates in 204 countries and territories, 1950–2019: a comprehensive demographic analysis for the Global Burden of Disease Study 2019. Lancet 2020:
7. UNECE. Суммарный коэффициент рождаемости, https://w3.unece.org/PXWeb/ru/Table?IndicatorCode=26
8. United Nations Department of Economic and Social Affairs, Population Division (2020). World Population Ageing 2020 Highlights: Living arrangements of older persons (ST/ESA/SER.A/451)

Ваге БУЛАНИКЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук, доцент

СОЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА

ПЕРЕПИСЬ НАСЕЛЕНИЯ РА 2022: ТРЕВОЖНЫЕ ЦИФРЫ

В данной статье были изучены некоторые ключевые показатели переписи населения 2022 года в Республике Армения. Отмечается, что особую тревогу вызывают темпы сокращения постоянного и существующего населения РА. 2001-2022 гг. за этот период негативные изменения произошли и в половозрастном составе существующего населения. В частности, численность населения в возрасте до 30 лет в 2022 году сократилась примерно на 1/3 (34%) по сравнению с 2001 годом. В возрастной группе от 30 до 54 лет численность населения сократилась в среднем примерно на 10%. Противоположная ситуация наблюдается в возрастной группе старше 60 лет. За указанный период численность населения старше 60 лет увеличилась почти вдвое (191%) и составила около 25,1% существующего населения. По итогам переписи 2022 года около 45% женщин в возрастной группе от 20 до 34 лет никогда не имели детей, что доказывает, что средний репродуктивный возраст женщин постепенно увеличивается.

Ключевые слова: *перепись, постоянное население, существующее население, половозрастной состав, старение населения, рождаемость*

Vahe BULANIKYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics, Associate Professor

SOCIAL POLICY

2022 POPULATION CENSUS OF THE RA: ALARMING FIGURES

The paper examined several key indicators of the 2022 population census in the Republic of Armenia. It is noted that the rate of decline in the permanent and existing population of the Republic of Armenia is of particular concern. Between 2001 and 2022, there were also negative changes in the age and sex composition of the existing population. In particular, the population under the age of 30 in 2022 decreased by approximately one-third (34%) compared to 2001. The population within the age group from 30 to 54 declined by about 10% on average. The opposite situation is observed in the age group of individuals over 60 years. During this period, the population over 60 years of age almost doubled (191%) and amounted to about 25.1% of the existing population. According to the results of the 2022 census, about 45% of women in the age group from 20 to 34 years old have never had children, which proves that the average reproductive age of women is gradually increasing.

Keywords: *census, permanent population, existing population, sex and age composition, population aging, birth rate*